Իրազեկում

2016 **թվականի օգոստոսի** 1-**ից ուժի մեջ մտնող հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջների վերաբերյալ**

1) Օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող՝ նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների)՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 11-ի N 1406-Ն որոշմամբ հաստատված արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքը և այդ դիրքում ներառված՝ փաստացի վաճառված ապրանքի անվանումը,

բ. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 875-Ն հրամանով հաստատված՝ արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ) (այսուհետ՝ դասակարգիչ) 4-րդ աստիճանին համապատասխան՝ ըստ դասակարգչով սահմանված ծառայության կոդը (4 նիշը) և այդ կոդում ներառված՝ փաստացի մատուցված ծառայության անվանումը:

Սույն ենթակետի կիրառության իմաստով, եթե հարկ վճարողի իրացումից հասույթը որևէ տարվա արդյունքներով գերազանցել է 58.35 մլն դրամի շեմը, ապա այդ պահից սկսած՝ կիրառվում է սույն ենթակետով սահմանված պահանջը՝ անկախ հարկ վճարողի՝ հետագա տարիների իրացումից հասույթի մեծությունից:

2) Նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու

հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար՝

ա. ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքի անվանման ԱՏԳ ԱԱ 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքում չներառված ապրանքի անվանման տպագրումը,

բ. ՀԴՄ-ի կտրոնի վրա ստացված ծառայության անվանման դասակարգչով սահմանված ծառայության կոդում (4 նիշում) չներառված ծառայության անվանման տպագրումը,»,

3) ՀԴՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրած՝ նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար՝

ա. ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքի անվանման ԱՏԳ ԱԱ 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքից տարբերվող ԱՏԳ ԱԱ այլ դիրքում ներառված ապրանքի անվանման մասին տեղեկության ուղարկումը հարկային մարմին,

բ. ՀԴՄ-ի կտրոնի վրա ստացված ծառայության անվանման դասակարգչի համապատասխան կոդից (4 նիշից) տարբերվող ծառայության անվանման մասին տեղեկության ուղարկումը հարկային մարմին: